

նայիս Այրին ընդ դէմ իրաւանց , և արգելուն անտի զմեզ և զուխաւորս մեր : Կոչեաց դատաւորն զԹովմաս փոխանորդն Լատինաց , և եհարց զնա սակա բանալեացն . և նա արար պատասխանի , թէ նոքա նախ քան զտիրել Երուսաղէմի Սէլիմայ արքայի մինչեւ ցայսօր են 'ի ձեռս Լատինաց : Իսկ Գերմանոս որ կայր անդ , մերժէր զբանս նորա , և ոչ ունին մատուցանել անգամ կամէր : Ի բազմանալ վիճմանց , կոչեաց դատաւորն զոմանս յայլազգեաց քաղաքին , եւ 'ի հարցանելն՝ ետուն պատասխանի առաջի Գերմանոսի , և ասեն . բանալիք այրին են 'ի ձեռս Լատինաց յաւուրց անտի Սէլիմայ . նոքա բանան զբրուհս ուխտաւորացն այլազգեաց եւ քրիստոնէից , և ոչ ոք համարձակեցաւ յարուցանել վէճս վասն այսր : Յետ վկայելոյ նոցա , մատոյց Թովմաս զհրովարտակն Արքունի , որոյ բովանդակութիւնն է . « Լատին կղերք առաքելցին պատգամաւորս 'ի Դուռն . և յայտ արարին թէ եկեղեցին Բեթղեհէմի՝ յորում բնակին , և բանալիք Այրին՝ են 'ի ձեռս իւրեանց 'ի սկզբանէ անտի . այժմ՝ ոմանք 'ի քրիստոնէից հակառակ նախնի սովորութեան՝ կամին յաիշտակել ըզնոսա : Ապա հրամայէ թողուլ զփականս 'ի ձեռս Լատինաց , և մերժել զհակառակութիւնս այլոց քրիստոնէից » : Ի \ Ըճմագիւ Էվվէլ , ԳԿՊ (1333) : Մատոյց նաեւ զայլ հրովարտակա առաջին Թագաւորաց , և զմուրհակս դատաւորացն Եգիպտոսի և Երուսաղէմի , և հրաման շինելոյ եւ նորոգելոյ զտեղիսն և բնակիլ յազգէ յազգ : Զայս ամենայն ընթերցան յականջս Գերմանոսի եւ թարգմանեցին բառ առ բառ . եւ յետ այնորիկ մնացին փականք Այրին 'ի ձեռս Լատինաց , որպէս և էրն : Եւ պատուիրեաց դատաւորն երկոցունց՝ Գերմանոսի չհակառակիլ Լատինաց վասն այնր , և Լատինաց՝ չարգելուլ զքրիստոնէայս , որք զիմեն անդ յուխտ , և առանց նեղութեան բանալ զբրուհսն , ըստ սովորութեան : Ի \ Շէվվալ ամոյ՝ ԳԿԿ (1364) :

Արդունի կոչեցեալ այլազգիքն՝ որք բնակէին յԵրուսաղէմ , ամբաստան եղեն առ դատաւոր քաղաքին զԱնդրիաս պատրիարքէն Հայոց , որպէս թէ՛ յափշտակեալ է զպարտէզն մերձ 'ի վանս Հրեշտակապետաց , և խնդրէին 'ի նմանէ կոչել զԱնդրիաս եւ պատուիրել նմա՝ թողուլ